ւորների և գիւղացիների շրջանային ժողովում, յունիսին, Ն. Ժորդանիան հետեւեալ ձեւով էր ներկայացնում ազգային խնդիրը.

Նա ազգային շարժումը համարում էր հետեւանք մի ազգի բուրժուազիայի քաղաքական իշխանութեան տիրանալու ձգտումի, ինչպէս նաև ազնուականութեան՝ իր նախկին դիրքերը պահելու ցանկութեան: Բանւորութեան և գիւղացիութեան ազգային խնդիրը իր լեզուն ազատ գործածելու ցանկութեան մէջ է: «Մինչդեռ բուրժուազիան և ազնուականութիւնը ձգտում են քաղաքական տիրապետութեան, բանւորութիւնն ու գիւղացիութիւնը հետապնդում են զուտ մշակութային նպատակներ: Այս հիման վրա բուրժուա և ազնուական կուսակցութիւնները պահանջում են ազգային հարցի լուծումը պետական ինքնօրինութեան իմաստով, իսկ բանւորութիւնը պահանջում է ազգային ինքնավարութիւն»:

«Ազգային ինքնավարութիւնը հնարաւոր է որոշ բնաշխարհի մէջ, եթէ որև է ազգ այնտեղ մեծամասնութիւն է կազմում: Անդրկովկասեան երեք խոշոր ժողովուրդներ կան — վրացիներ, հայեր և թուրքեր: Այն բնաշխարհների համար, ուր որևէ ազգ մեծամասնութիւն ունի, կազմւում է ազգային-բնաշխարհիկ ինքնավարութիւն. ազգային տեսակէտով խառն շրջանների մէջ՝ խառն ինքնավարութիւն՝ ամէն ազգի տալով ինքնօրինութիւն մշակոյթի խնդրում:

«Ֆեդերացիան, իբրև ազգային հարցի լուծում ընդունելի չէ, որովհետեւ նա չի համապատասխանում տնտեսական և հասարակական զարգացման: Ֆեդերացիա նշանակում է պետութիւնների միութիւն, մինչդեռ մի պետութեան կորատելը անջատ պետութիւնների՝ չի համապատասխանում պատմութեան ընթացքին: Ռուսաստանի համար հնարաւոր է մի ճանապարհ— կենտրոնական ռուսական հանրապետութիւն և ազգա-շրջանային ինքնավարութիւններ: Այդ ինքնավարութեանց իրաւասութիւնները պէտք է լինեն հետեւեալը:

1) Դպրոց (ստորին, միջին, բարձր): 2) Ժողովրդական առողջապահութիւն, անասնարուժութիւն: 3) Տեղական բնոյթ ունեցող հաղորդակցութեան միջոցներ: 4) Աջակցութիւն տեղական գիւղատնտեսական և առեւտրաարդիւնաբերական ձեռնարկների: 5) Հողերի շահագործում: 6) Դատարան: 7) Քաղաքային ձեռնարկներ: 8) Տեղական կարիքների համար հարկեր հաւաքելու իրաւունք: 9) Կառավարութիւն, գործադիր իշխանութիւն: 10) Կենտրոնում հրատարակւած օրէնքների գործադրութիւն: 11) Օրէնսդրական նախաձեռնութիւն»:

Այս ծրագիրը կազմեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի ա՛յն ժամանակւայ գործունէութեան հիմքը: Նա, ըստ ամենայնի, համապատասխանում էր «յեղափոխական դեմոկրատիայի» ցանկութիւններին: Սակայն, որքան էր արտայայտում վրաց ժողովրդի իրական բաղձանքները և վրաց սոցիալ-դեմոկրատիայի գործնական քաղաքականութիւնը — այդ կարելի է ըմբռնել, եթէ ի նկատի առնենք նրանց ներքին-ազգային աշխատանքը: Թւում է, թէ վրաց ազգի քաղաքական ապրումներն աւելի ճիշտ և անկեղծ ներկայացնում